Պարոն/Տիկին Ա. Գրիգորյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

«15» 06 2026 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մասնակիցների անուն, ազգանուն՝

Մերի Ղազարյան

Ելենա Բաբոյան

2.Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ 2026 թվականի հունիսի 8-11 Բելգիայի թագավորության Բրյուսել քաղաք:

4.Հրավիրող կողմը՝ Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհուրդ՝ CEER (Council of European Energy Regulators)

5.Գործուղման նպատակը՝ Մասնակցել 2026 թվականի հունիսի 9-10-ը Բելգիայի թագավորության Բրյուսել քաղաքում կայանալիք Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհրդի կողմից կազմակերպված «Ճկունության հնարավորությունների օգտագործումը՝ հանուն մաքուր էներգետիկ ապագայի» թեմայով դասընթացին:

6.Քննարկված թեմաները՝ CEER-ի կողմից կազմակերպված տարածաշրջանային դասընթացը նվիրված էր էներգետիկ համակարգերի ճկունության (flexibility) զարգացմանը՝ որպես մաքուր և կայուն էներգետիկ ապագայի կարևոր նախապայման:

Դասախոսությունները և քննարկումները կենտրոնացած էին քաղաքական, կարգավորող և շուկայական գործիքների վրա, որոնք անհրաժեշտ են վերականգնվող էներգիայի մեծ ծավալների ինտեգրման և էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալի աշխատանքի ապահովման համար:

Դասընթացի առաջին օրը ներկայացվեցին Եվրոպական միության քաղաքական առաջնահերթությունները և կարգավորող շրջանակը, որոնք ուղղված են էներգետիկ ճկունության խթանմանը: Քննարկվեցին «ոչ օրգանական վառելիքային» ճկունության աղբյուրների զարգացման խոչընդոտները, ինչպես նաև պահանջարկի արձագանքման (Demand Response) մեխանիզմների դերը: Հատուկ ուշադրություն դարձվեց տեղական շուկաների ճկունությանը, որոնք թույլ են տալիս բաշխիչ ցանցերի մակարդակում ներգրավել սպառողներին, արտադրողներին և ագրեգատորներին՝ ցանցի արդյունավետ կառավարման նպատակով: Ներկայացվեցին նաև պահանջարկի արձագանքման վերաբերյալ եվրոպական կարգավորումների հիմնական դրույթները:

Երկրորդ օրը շեշտը դրվեց շուկայի նախագծման (Market Design) լուծումների և էներգիայի պահեստավորման համակարգերի վրա: Ներկայացվեցին էներգիայի կուտակիչների (storage) տեսակները, դրանց կիրառման հնարավորությունները, համատեղ տեղակայումը վերականգնվող էներգիայի օբյեկտների հետ և դրանց դերը համակարգի ճկունության բարձրացման գործում: Առանձին քննարկվեց համակարգի օպերատորների դերը ճկունության մեխանիզմների և տեղական շուկաների զարգացման հարցում: Իտալիայի փորձի հիման վրա ներկայացվեց էլեկտրական մեքենաների լիցքավորման համար կիրառվող ճկունության մեխանիզմների փորձնական ծրագիրը: Դասընթացի ավարտին ներկայացվեցին էլեկտրաէներգիայի շուկայի նախագծման շրջանակում ճկունության կարիքների գնահատման մոտեցումները:

Դասընթացի խոսնակներն էին Եվրոպական էներգետիկայի ոլորտի փորձագետներ և կարգավորող մարմինների ներկայացուցիչներ: Մասնավորապես՝ Եվրոպայի առաջատար էներգետիկ կարգավորող կառույցների՝ CEER, ACER, ENTSO-E, ARERA, Energy Authority Finland, Smart Energy Europe ներկայացուցիչները:

Դասընթացին առկա ձևաչափով մասնակցում էին ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետությունից, Ուկրաինայից և Մոլդովայից, իսկ Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները մասնակցում էին հեռավար:

Ընդհանուր առմամբ դասընթացի գլխավոր ուղերձն այն էր, որ մաքուր էներգետիկ ապագան հնարավոր է այն դեպքում, եթե էլեկտրաէներգետիկ համակարգը դառնա ավելի ճկուն՝ օգտագործելով պահանջարկի կառավարման, էներգիայի կուտակման, տեղական շուկաների զարգացման և խելացի ցանցերի գործիքակազմը, որոնք հնարավորություն կտան ինտեգրել վերականգնվող էներգիայի մեծ հզորություններ՝ առանց նվազեցնելու համակարգի հուսալիությունը:

Գործուղվող ---------- ***Մ. Ղազարյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- ***Ե. Բաբոյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

15.06.2026թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 390-ՀՆ, Հրաման 387-ԳՔ 12.05.2026թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ՝ **Մերի Ղազարյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝ **Ելենա Բաբոյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բրյուսել /Բելգիայի Թագավորություն /**

5. Գործուղման ժամկետները **08.06.2026-11.06.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ** և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մերի Ղազարյան	Ելենա Բաբոյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)			-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	126	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54,404	54,404	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	217,617	217,617	435.234
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (ճանապարհածախս)			-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		217.617	217.617	435.234

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 12.06.2026թ.